



**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

03 դեկտեմբերի 2020թ.

**ԲԴԽ-19-Ո-Կ-5**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ ՀԱՅԿ  
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ  
ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՅԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ՝  
ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ՝**

*նախագահությամբ՝*

*Բարձրագույն դատական խորհրդի նախագահ*    *Ռ. Վարդագարյանի,*

*մասնակցությամբ՝*

*անդամներ*

- Գ. Բեքմեզյանի,*
- Ա. Հայկյանցի,*
- Մ. Մակյանի,*
- Լ. Մելիքջանյանի,*
- Ա. Մխիթարյանի,*
- Ս. Չիչոյանի,*
- Վ. Քոչարյանի,*

*քարտուղարությամբ՝*

*Մ. Թելոյանի,*

դռնբաց նիստում, քննության առնելով Բարձրագույն դատական խորհրդի անդամ Հայկ Հովհաննիսյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

**Պ Ա Ր Չ Ե Ց**

## **1. Գործի նախապատմությունը**

Բարձրագույն դատական խորհրդի անդամներ՝ Գ.Բերմեցյանը, Ա.Մխիթարյանը, Ս.Մակյանը (այսուհետ՝ Հանձնախումբ), դիմել են Բարձրագույն դատական խորհրդին՝ Բարձրագույն դատական խորհրդի անդամ Հայկ Հովհաննիսյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննության առնելու միջնորդությամբ:

Բարձրագույն դատական խորհուրդը 15.05.2020 թվականի որոշմամբ դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան՝ 17.02.2018 թվականին ընդունված և մինչև 25.03.2020 թվականը գործող խմբագրությամբ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 85-րդ հոդվածի 2-րդ մասի ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածին համապատասխանության հարցը որոշելու համար: Միաժամանակ Բարձրագույն դատական խորհրդի անդամ Հայկ Հովհաննիսյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին միջնորդությունը քննության առնելու վերաբերյալ գործի վարույթը կասեցվել է մինչև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքերից որևէ մեկի ի հայտ գալը:

ՀՀ Սահմանադրական դատարանը 17.11.2020 թվականին կայացրել է որոշում՝ Բարձրագույն դատական խորհրդի դիմումի հիման վրա՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 85-րդ հոդվածի 2-րդ մասի (մինչև 25.03.2020թ. ՀՕ-197-Ն օրենքի ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ)՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ՝ գործի վարույթը կարճելու մասին:

Բարձրագույն դատական խորհրդի 23.11.2020 թվականի որոշմամբ գործի վարույթը վերսկսվել է:

## **2. Վարույթ հարուցած մարմնի դիրքորոշումը**

Բարձրագույն դատական խորհրդի անդամ Հայկ Հովհաննիսյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ Հանձնախմբի միջնորդությունը ներկայացվել է այն հիմքով, որ հնարավոր է, որ «Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Արայիկ Մելքումյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ» Բարձրագույն դատական խորհրդի 14.02.2019 թվականի թիվ ԲԴԽ-8-Ո-Կ-04 որոշումը նոր հանգամանքի հիմքով վերանայելու հարցի վերաբերյալ» Բարձրագույն դատական խորհրդի 27.02.2020թ. թիվ ԲԴԽ-4-Ո-Կ-1 որոշման առնչությամբ Բարձրագույն դատական խորհրդի անդամ Հայկ Հովհաննիսյանի կողմից ներկայացված «Հատուկ կարծիք»-ում տեղ գտած որոշ արտահայտություններով ենթադրաբար խախտվել են «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված դատավորի վարքագծի կանոնները:

## **3. Հարուցված կարգապահական վարույթի համար Էական նշանակություն ունեցող հանգամանքները**

1) Բարձրագույն դատական խորհուրդը 15.05.2020 թվականի որոշմամբ դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան՝ 17.02.2018 թվականին ընդունված և մինչև 25.03.2020 թվականը գործող խմբագրությամբ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 85-րդ

հողվածի 2-րդ մասի ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածին համապատասխանության հարցը որոշելու համար: Միաժամանակ Բարձրագույն դատական խորհրդի անդամ Հայկ Հովհաննիսյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին միջնորդությունը քննության առնելու վերաբերյալ գործի վարույթը կասեցվել է մինչև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքերից որևէ մեկի ի հայտ գալը:

2) ՀՀ Սահմանադրական դատարանը 17.11.2020 թվականին կայացրել է որոշում՝ Բարձրագույն դատական խորհրդի դիմումի հիման վրա՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 85-րդ հոդվածի 2-րդ մասի (մինչև 25.03.2020թ. ՀՕ-197-Ն օրենքի ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ)՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճելու մասին:

3) Բարձրագույն դատական խորհրդի անդամ Հայկ Հովհաննիսյանի կողմից ներկայացված հրաժարականի դիմումի հիման վրա Բարձրագույն դատական խորհրդի 23.11.2020 թվականի թիվ ԲԴԽ-76-Ո-170 որոշմամբ վերջինիս լիազորությունները 23.11.2020 թվականից դադարել են:

4) Բարձրագույն դատական խորհրդի 23.11.2020 թվականի որոշմամբ Հայկ Հովհաննիսյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին միջնորդությունը քննության առնելու վերաբերյալ գործի վարույթը վերսկսվել է:

#### **4. Բարձրագույն դատական խորհրդի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Քննարկելով Հանձնախմբի միջնորդությունը՝ Բարձրագույն դատական խորհուրդը գտնում է, որ Բարձրագույն դատական խորհրդի անդամ Հայկ Հովհաննիսյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցի քննությունը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 85-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհրդի անդամին Բարձրագույն դատական խորհուրդը կարող է ենթարկել կարգապահական պատասխանատվության՝ սույն օրենսգրքով սահմանված դատավորի վարքագծի կանոնները խախտելու համար: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը Բարձրագույն դատական խորհուրդը քննում է Բարձրագույն դատական խորհրդի առնվազն երեք անդամի միջնորդության հիման վրա: (...) Իսկ ըստ նույն հոդվածի 3-րդ մասի՝ Բարձրագույն դատական խորհրդի անդամի կարգապահական վարույթի նկատմամբ կիրառվում են սույն օրենսգրքի 19-րդ գլխի կանոնները՝ սույն հոդվածի պահանջների հաշվառմամբ:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավորին և Բարձրագույն դատական խորհրդի անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու, դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունները դադարեցնելու, ինչպես նաև իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի և

Բարձրագույն դատական խորհրդի անդամի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու վերաբերյալ հարցերը քննելիս Բարձրագույն դատական խորհուրդը հանդես է գալիս որպես դատարան:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 150-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությունը Բարձրագույն դատական խորհուրդը կարճում է, եթե կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությունը վերսկսելուց հետո առկա են սույն օրենսգրքի 160-րդ հոդվածով նախատեսված դատավորի լիազորությունների դադարման հիմքեր:

Նույն օրենքի 160-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Դատավորի լիազորությունները դադարում են, եթե նա հրաժարական է ներկայացնում:

Քննարկվող պարագայում Բարձրագույն դատական խորհուրդը 15.05.2020 թվականի որոշմամբ դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան և կասեցրել է գործի վարույթը մինչև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքերից որևէ մեկի ի հայտ գալը: ՀՀ Սահմանադրական դատարանի 17.11.2020 թվականի որոշման հիման վրա Բարձրագույն դատական խորհրդի 23.11.2020 թվականի որոշմամբ Հայկ Հովհաննիսյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին միջնորդությունը քննության առնելու վերաբերյալ գործի վարույթը վերսկսվել է:

Տվյալ դեպքում հիմք ընդունելով վերոգրյալը, նկատի ունենալով, որ Բարձրագույն դատական խորհրդի անդամ Հայկ Հովհաննիսյանի կողմից ներկայացված հրաժարականի դիմումի հիման վրա Բարձրագույն դատական խորհրդի 23.11.2020 թվականի թիվ ԲԴԽ-76-Ո-170 որոշմամբ վերջինիս լիազորությունները 23.11.2020 թվականից դադարել են՝ Բարձրագույն դատական խորհուրդը գտնում է, որ առկա է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 160-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությունը կարճելու հիմքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 150-րդ հոդվածի 4-րդ մասով և 160-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Բարձրագույն դատական խորհուրդը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Բարձրագույն դատական խորհրդի անդամ Հայկ Հովհաննիսյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությունը կարճել:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և վերջնական է:

**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ  
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

**Ո. ՎԱՐԴԱՉԱՐՅԱՆ**

**ԱՆԴԱՄՆԵՐ՝**

**Գ. ԲԵՔՄԵՉՅԱՆ**

**Ա. ՀԱՅԿՅԱՆՑ**

**Մ. ՄԱԿՅԱՆ**

**Լ. ՄԵԼԻՔՉԱՆՅԱՆ**

**Ա. ՄԽԻԹԱՐՅԱՆ**

**Ս. ՉԻՉՈՅԱՆ**

**Վ. ՔՈՉԱՐՅԱՆ**